Ե. ՏԱՐԻ — ՁՈՐԵՔՇԱԲԹԻ 6 ՓԵՏՐՎԱՐ 1902 — Թիւ 389

...rian, Mechitharistengasse W. 4 Vienne

ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԻՒՆ
Պուլկարիոյ համար
Տարեկան 12 ֆր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար Տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար
Տարեկան 3 տ.
Վեցամսեայ 1.50 »
ՄԱՆԹԻԿ ՎՃԱՐԵԼԻ
Դրանուցման տոմսը առաջին երեսին համար 40ա. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքից աւելի անգամներու համար 20 տոկոս զեղչ կրնայ։

Վառնայի համար ձեռքէ 10 սանթիմ

# ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

...աստի ... դրամ դրեն ... հասցէ։
Политическій навѣстникъ «Шаржумъ» Варна
Redaction du journal «Charjoum» Varna (Bulgarie)
...տեղեկ հս են տրուիր
Արտասահմանի ձեռքէ
)( 20 ՍԱՆԹԻՄ )(
Պուլկարիոյ համար ձեռքէ
≍ 15 ՍԱՆԹԻՄ ≍

ՇԱՐԺՈՒՄԻ ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԼՏՓ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

## ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

—o—

Մեր բաժանորդներէն մէկ մասը չը նայած մեր յայտարարութեանց, իրենց պարտքը չը ճանչցան, ու դեռ կը շարունակեն թերթ առնել։

Այդ անպարտաճանաչ մնացորդներուն ժամանակ կուգանք մինչեւ փետրուար քսան. ու այնուհետեւ պիտի յայտարարենք անունները. իսկ Պուլկարիոյ մէջ չը վճարող բաժանորդներէն օրէնքի դիմելով պիտի գանձենք։

Շարժում միշտ ղրկուած է ով ուզած է. ոչ ոքի առանց ուզելու, մանաւանդ նոր խմբագրութեան միջոցին, թերթ չէ ղրկուած. եւ այդ ուզողներուն բոլոր նամակները պահուած են.

Բաժանորդները թող հասկնան որ խմբագրութիւնս թուղթի, մարքայի, տպարանի, գրաշարի ստակ կը վճարէ, և երբ իր բաժանորդները իրենց չնչին պարտքը չեն վճարեր, խմբագրութիւնը ահագին պարտքերու տակ կիյնայ, թէ ինք կը վնասուի, և թէ իրեն հետ գրամի գործ ունեցողները։

## ԿՐԿԻՆ ՕՐՄԱՆԵԱՆ

Պոլսից մեզ հաղորդում են որ Օրմանեանը, Թրքական արտաքին գործոց նախարարի դիմումի և յանդիմանութեան վրա, բուլգարական մի քանի քաղաքների հայ թաղական խորհուրդներին յանդիմանագրեր է ուղարկել Պետրոս Սէրէմճեանի և իր ընկերների համար հոգեհանգիստի պաշտօններ կատարվելու պատճառով։ Զարմանալի այն է որ այդ լուրը մենք Պոլսից ենք ստանում. ինչպէս երեւում է Պատրիարքը մեր թաղական խորհուրդներին պատուիրել է գաղտնիքը պահել. բայց մի՞թէ Օրմանեան չը մտաբերեց որ «Շարժում»ը՝ իր Լահէի ժողովին ուղարկած հեռագիրն անգամ Պատրիարքարանից իմացաւ։

Թուրք արտաքին գործոց նախարարի բռնած ընթացքը մեզ համար հասկանալի է. բայց Օրմանեան ի՞նչպէս է համաձակվում է իրեն թոյլ տալ, մեր անմահ հերոսներին աւազակ անուանելով, յանդիմանել ազատ արտասահմանի մէջ ապրող թաղականներին և քահանաներին, իրենց պարտականութիւնը կատարած լինելու համար։

Երբ Օրմանեան, երկրի մէջ թրքական շահերը պաշտպանելու համար քայլեր է անում հակառակ հայ յեղափոխական և ազատասէր տարրի, այն ժամանակ այդ ուղղորմելու պաշտպանները մի քիչ իրաւունք են ունենում. բայց այսպիսի պարագաներում, ինչպէս հոգեհանգստի դէպքն է, ի՞նչպէս կարելի է դրան պաշտպանել։ Մի՞թէ Օրմանեան չը կարողացաւ արտաքին գործոց նախարարին յայտարարել թէ— Արտասահմանի հայ ժողովուրդը, ինձ պատարիաք չէ ընդունում, իր եկեղեցիների մէջ իմ անունս չէ յիշում. ես չեմ կարող այդ տեսակ մի յանդիմանութիւն անել ժողովրդին աւելի կը դրգռեմ իմ դէմ։

Օրմանեան մոռացա՞ւ Լահէի հեռագրի խնդիրը. մոռացա՞ւ այն խոշոր արհամարանքը որին ենթարկվեց. մոռացա՞ւ այն խոշոր թուքը, որ արտասահմանի հայ ժողովուրդը փակցրեց իր ճակատին։

Ժողովուրդը իր ծոցից դուրս վիժված վատ արարածներին չի մոռանում, Օրման Պատրիարք. այդ լաւ սեղմեցէք ձեր ուղեղի մէջ։

ՎԱՐԴՕ

## «ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ»

(Շարունակ կան—նամակ)

Ընկերներ,

Կարգադիր Ցանձնաժողովը յայտարարում է ի գիտութիւն Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան բոլոր անդամուհիների և անդամների, որ 1902 թուի Համագումարը կը բացուի Ժընէվում Զատկի տօնի՝ մարտի 31ին, երկուշաբթի օր, և կը տեւի մի շաբաթ։

Համաձայն մեր կանոնագրութեան 10րդ. յօդուածի՝ խնդրում ենք ուսանողական տեղական մարմիններին՝ ձեռնարկել պատգամաւորների ընտրութեան և ընտրուածների անունները տեղակացնել մեզ՝ յուցակի մէջ մտցնելու համար։

Դասախօսութիւն կարդալ յանկացողները թող բարեհաճեն իրենց որոշման և ընտրած նիւթի մասին հաղորդել Կարգադիր Ցանձնաժողովին՝ ոչ աւելի ուշ քան փետրվարի 25ը, որպէսզի կարող լինենք վաղօրօք պատրաստել Համագումարի ծրագիրը։

Հրաւիրում ենք տեղական մարմիններին՝ յատուկ ժողով գումարել և պատրաստել այն բոլոր առաջարկները, որ կուզենային ներկայացնել Համագումարի քննութեան, տեղեկագրելով այդ մասին մեզ՝ նոյնպէս ոչ աւելի ուշ քան փետրվարի 25ը։

Ժընէվում մարտ ամսին կը կազմուի յատուկ մանաժողով՝ եկող ընկերներին ընդունելու և դիւրութիւններ տալու համար։

Ընկերական բարեւներով
Կարգադիր Ցանձնաժողով

1902 1 փետրուար
Ժընեւ

Հասցէ՝ Օանիսն տէ Զէդիւդիան Արմենիեն տը ղ'Էօրոր. ռիւ տը ղ'Էֆոլ-տը շիմի, 2, Ժընեւ։

## ՃԱԲՈՆ ԵՒ ԱՆԳԼԻԱ

—o—

Այսօր քաղաքական աշխարհը մասամբ իրարանցումի, մասամբ ալ շուարումի մէջ կը գտնուի քաղաքական նորութեան մը պատճառով. նորութիւն մը, որու մասին երկու տարի առաջ խօսուեցաւ, բայց ինքը նորութիւնը ոչ ոքի չունեցաւ. և չէր ալ կարծուէր թէ տեղի պիտի ունենայ։

Անգլիա և Ճաբոն յունուար 17ին դաշնակցութիւն մը կնքեր են, յարձակողական և պաշտպանողական, որուն նպատակն է Քորէայի և Չինաստանի անկախութիւնը և ամբողջութիւնը պահպանել։

Այդ դաշնակցութեան մասին պաշտօնապէս յայտարարուեցաւ թէ Անգլիոյ և թէ Ճաբոնի մէջ, ինչպէս նաեւ այն պարագան որ ան կնքուած չէ ոչ է պետութեան մը ՀԱՍ հասցնելու նպատակով. . . (!)

Այս քաղաքական նորութիւնը գոհունակութեամբ ընդունուեցաւ Աւստրիոյ, Գերմանիոյ, Իտալիոյ և Ամերիկայի մէջ։ Գերմանիոյ ու Աւստրիոյ մամուլը կը յայտարարեն որ այդ հարուածը ուղղուած է միայն Ռուսիոյ դէմ, անոր ծայրագոյն արեւելքի մէջ ունեցած ծրագիրները խորտակելու համար։

Իրողութիւնը ան է որ երկար տարիներէ ի վեր ոչ է պետութեան մը հետ դաշնակցութիւն կնքելէ շարունակ խուսափող Անգլիոյ կառավարութիւնը դաշնակցութեան մը կապող կաշկանդող պայմաններէն ազատ պահել ուզող Անգլիան այսօր դաշնակցութիւն կնքեց Ծայրագոյն արեւելքի էն զօրաւոր պետութեան մը հետ։

Ապագան պիտի պարզէ թէ այս դաշնակցութիւնը քաղաքական ինչ հետեւանքներ պիտի ունենայ, առայժմ այսչափս պարզէ թէ՝ Ռուսիա և ոչ ուրիշ պետութիւն մը պիտի կրնան իրենց փայփայած ծրագիրներուն բարարութիւն տալ Չինաստանի և Քորէայի մէջ։ Այս դաշնակցութեամբ Ճաբոն կը միանայ Եւրոպական մեծ պետութեան մը. ուրեմն ինքն ալ դեր պիտի խաղայ Եւրոպայի ապագայ քաղաքական պատմութեան մէջ։

ԿԷՏ

# ԳԻԾ ՄԸ ԹՕԼՍԹՕՅԻ ՆԿԱՐԱԳՐԷՆ

Ռուս հռչակաւոր գրագէտ Կոմս Թոլսթոյ կրկին ծանրապէս հիւանդ է։ այնպէս որ այս անգամ կը կարծուի թէ չը պիտի կրնայ իր հիւանդութիւնը յաղթել։

Այդ տառիւորթանը զառամեալ և անվախ գրագէտի՝ Ռուս ներքին գործոց նախարարին բաւական ժամանակ առաջ գրած մէկ նամակը հրատարակած է, որուն շարժառիթը եղած է Թոլսթոյը համակրող տիկնոջ մը ձերբակալումը։

Այդ նամակով Թոլսթոյ կառաջարկէ նախարարին ոչ թէ իրեն համակիրները պատժել, այլ ուղղակի ինքը, որովհետեւ Ռուս կառավարութեան անհաճելի գրութիւններուն հեղինակը ինքն է, ուրեմն և յանցանքի սկզբնապատճառը և աղբիւրը։

Նամակը բաւական երկար է, կծու շեշտերով ու տողերով։

Սակայն Թոլսթոյի այդ նամակը փոխանակ իրեն համակիրներուն վիճակը մեղմացնելու, ընդհակառակը աւելի ծանրացուցեր է։

Ներքին գործոց նախարարը չը յանդգնելով ժողովրդական գրագէտին դպչելու, իր բարկութեան թոյնը թափեր է անոր ձերբակալուած և ազատ համակիրներուն վրայ։

Այսօր ամբողջ Ռուսիա, սրատարոփ կապած է իր յանդուգն, ազատախօս, և մէն մի կոնուլթեան դիմադրող, կայն ազատ համարձակ հարուածող ու նախատող մեծ զաւակին հիւանդութեան ելքին։ Ամէնքն ալ համոզուած են, որ առ այժմ Թոլսթոյի տեղը բռնող մը չը պիտի ըլլայ, ատոր համար ալ վշտերնին աւելի մեծ է։

Ռուս պահպանողական տարրն ալ սրատարոփ վիճակի մէջ կը գտնուի. ան վշտի մէջ չէ ընկղմուած, այլ ընդհակառակ աչքերը չորս բացած կսպասէ Թոլսթոյի անշնչանալուն, որպէսզի օր առաջ ազատի այն յանդուգն ու նախատող ձայնէն, զոր մեծ ձերունին ոչի ժամանակը չը կըրցաւ լռեցնել։

***

# ՓՕՔՇԱՆԻ ՔԱՀԱՆԱՆԵՐԸ

«Շարժումի մէջ ատենէ մը ի վեր կը կարդանք „Ս. Գոռայր»ի գրութիւնները, որոնք հաճելի նորութիւններ կը պարունակեն տարբեր ոճով և թարմ հիւթով համեմուած։ Ատոնց մէջ գովեստի արժանի գլխաւոր կէտերէն մին ալ է գրողին անկողմնակալ և խարազանող ուղղութիւնը, զոր «Շարժումի»ին ալ նշանաբան եղած է միշտ։ Երբ՞ի թէ մեր բոլոր գրողներն ալ միեւնոյն առնական կորովամտութիւնն ունենային, այն ատեն գուցէ ազգային հրապարակագրութիւնը աւելի բարձր եւ փայլուն դիրք մը պիտի ունենար։

Ոչ հայը զայրանալու ատիճան չը զարմանար արդեօք՝ կարդալով Ռուսմանահայ քահանաներու տխուր պատկերները, աչքի առջեւ ունենալով մանաւանդ ազգի սա ճգնաժամային վիճակը, ուր ամէն վէկս պարտինք գերբնական ուժ գործածել կորստաբեր վտանգին կուրծք տալու համար։

Շեփակը խօսելով, Ռուսմանահայ քահանաներուն վրայ գրուածը չափազանցութիւն պիտի համարէի, եթէ երբէք անոնցմէ իւրաքանչիւրը մօտէն տեսած ու ճանչցած չըլլայի։ Այո՛, անոնց մեծ մասը կարծուածէն աւելի անխիղճ, անարժան արարածներ են, որոնց ըրածները միշտ մութին մէջ մնալով՝ չարիք չեն թողած գործած են խեղճ հօտին գլխուն։ Ալ հերիք է, պէտք է մութի մէջ գործողները մերկապարանոց առնել՝ գոնէ ապագայ սերունդին և պատմութեան թուք ու մուրին ենթարկելու համար զանոնք յաւիտենապէս։

Ինչ որ է, ես այդ օգտակար ձանձրոյթը դարձեալ Վարդոյի ու Գոռայրի յանձնելով, կը փութամ վերնագրիս պահանջը լրացնել՝ նախ Փօքշանի քահանաները մօտէն ճանչցած ըլլալուս և երկրորդ յօդուածագիր պարոնին յանձնարարութիւնը յարգելու համար, մտածելով թէ անշուշտ իր այդ ձեռնպահութիւնը բաւական պատճառներ ունի։ Այսու հանդերձ հաստատապէս կը յուսանք թէ՝ ի հարկին Գոռայր մեր գրածները պիտի վաւերացնէ եւ կամ պիտի ուղղէ իր սովորական ուղղամտութեամբ։

Փօքշանի մէջ երկու քահանաներ կան. առաջինը Տ. Պետրոս Մամիկոնեան բնիկ Կիւմիւշխանէցի։ Այս մարդ փալախայական չրջանի վարժապետներէն եղած է։ Իր ժամանակին տիրող տգիտութենէն օգտուելով քահանայութեան ասպարէզը նետուած է։ Ինչպէս աշխարհականութեան նոյնպէս եւ արդի պաշտօնին մէջ անլուր անշնորհքութիւններու գագաթնակէտին հասած է միշտ լողալով բարոյական անկումներու մէջ։

Երզնկայէն գիշերանց փախչիլը եւ Կասմա գիւղին մէջ գործածները բոլոր Երզնկացիներուն եւ Սեբաստացիներուն ծանօթ է։ Զմիւռնիա, Պոլիս որքան ներուն հաշիւը չրկայ։

Թողունք Թուրքիոյ մէջ պատահածները, հապա Փօքշանի կեա՞նքը. անկարելի է գրի առնել։ Եկեղեցին պարզապէս թատրոն դարձուցած է. հոն կերթայ ամեն օր ու փոխանակ աղօթքի հեքիաթներ կը պատմէ, պատկերներ կը ծաղրէ, ձայնաւորը կը բամբասէ, լուսարարը կը ծեծէ և ժամկոչին կը հայհոյէ և այս ամենը «եկեղեցիին» մէջ, սեղանին առջեւ։ Իր սովորական խօսքերը մեր ազգը ամատ, անխելք, յեղափոխութիւնը սրիկայութիւնը ու խարեբայութիւն և առանց հաւատքնիս փոխելու փրկութիւն չը գտնելնիս է»։

Ասոնք ալ բան մը չէ, հապա իր մի գազանային ախտը յոգեցնելու համար քանիցս գործած գայթակղութիւնները, ուրդ կը խռովի եւ բառ չը գտներ զանոնք բացատրելու։

Այս պարագային մէջ, ըսէ՛ք, կաղչեմ, Փօքշանայը ի՞նչպէս չօտարանայ ուրեմն։ Աշխէն կէսէն աւելին ժամ չի գար այդ մարդուն պատճառուն եւ գուցէ քիչ ատենէն ամբողջ ժողովուրդը աղի արցունք կը թափէ՝ տեսնելով Պատրիարքարանին անձեռնհասութիւնը եւ միւս կողմանէ ամչնալով տեղական օտար տարրէն, չուզեր չափուիլ այդ անխիղճ քահանային հետ. ինչպէս որ Պոլսոյ Ղազանցիք ծայր ու ծանակ եղան երբեմն Աթանասի մը երեսէն։

Այո՛, դարձեալ կը կրկնեմ, այսպիսիները զսպելու միակ միջոցը մամուլի մէջ պախարակելն է, ամեն ա-

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

# ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻՆ

Մ Ա Ի Ի

ԴԼՈՒԽ Ա.

Արդէն երկու շաբաթ էր որ Վահէն և Զարուհին Դաւրէժում էին գտնըվում։ Այդ երկու շաբաթվայ մէջ երկուսն էլ կարողացել էին բաւականաչափ գաղափար կազմել թէ տեղական ժողովրդի և թէ այն երիտասարդների մասին, որոնք իրենց ընկերները պէտք է լինէին։ Դաւրէժի հայութեան կեանքը այնքան էլ լաւ տպաւորութիւն չէր թողել Զարուհու վրա, որովհետեւ այդ կեանքն էլ նոյնքան, թերեւս աւելի, փակ, նախապաշարումներով լի, ու խաւարապատ էր, որչափ իրենց հայրենիքում։ Քաղաքը իր նեղ փողոցներով, իր փակուած տներով, փողոցները իրենց աղտոտութիւններով, Պարսիկները իրենց դէպի Հայերը արտայայտած արհամարանքով շատ կոտրել էին Զարուհու սիրտը։ Նրա սիրտը կծկվում էր, երբ մտածում էր թէ Վահէի Տաճկաստան անցնելուց յետոյ մեն մենակ պէտք է մնայ այդ քաղաքի մէջ։ Նա տանը մենակ նստել չէր կարողանում. իսկ երբ դուրս էր գալիս, տասնեակներով պարսկական վաղաղատ աչքեր ցրցվում էին նրա վրա. ուրեմն, մտածում էր նա, Վահէի գնալուց յետոյ ես ստիպուած պէտք լինեմ օրերով և շաբաթներով փակված մնալ իմ սենեակում, որի առջեւը բարձր պատեր կան-ես կատարելապէս բանտարկված պէտք է մնամ։

Զարուհին, պարտէզի մէջ, հատատաբուն ու հսկայական բարձրութեամբ թթենիի տակ նստած՝ այս խոհերի մէջ էր ընկած՝ երբ Վահէն պարտէզ մտաւ։ Նա մօտենալով Զարուհուն նստեց նրա կողքին և հարցրեց.

—Ի՞նչ ես մտածում, Զարուհի, ի՞նչու ես այդպէս տխուր։

—Ոչինչ, մենակ մնացած և պարապ մարդը միշտ մտածելու մի բան կը գտնի, Վահէ։

—Այո, ճիշդ է. բայց քո հասակի օրիորդը, մենակ մնացած ժամանակ աւելի ուրախ մտածումներ կունենայ, իսկ դու տխուր ես։ Արդեօք տենչիք, մայրդ, հայրենիքը միտքդ ընկա՞ն. արդեօք հիմա ե՞ս զգում որ քո որոշումը այնքան էլ գործնական չէր։

—Ի՞նչ ես ասում Վահէ. ոչ հայրենիք և ոչ էլ տենչիք միտքս ընկան, ես ուրիշ բան էի մտածում։

—Ի՞նչ էիր մտածում, տպա հոգիս.

—Ես մտածում էի, որ առանց քեզ ինձ համար շատ դժուար պէտք է լինի այս տեղ ապրել. իմ հաշիւս մէջ միայն այդ կէտում եմ սխալվել։

Ես մտածում էի թէ աւելի լաւ չէր լինի, որ ես էլ քեզ հետ գայի. դու տեսար որ Զուլֆայից մինչեւ այս տեղ ես գրեթէ առանց յոգնութեան անցրի. թէեւ ճանապարհորդութիւնը ձիով էր։

—Այո, Զարուհի, բայց այդ ճամբորդութիւն էր. առանց վտանգի. իսկ հիմա ես թշնամու երկիրն եմ մտնում. ամէն քայլափոխում վտանգ կայ. ես ստիպված եմ լինելու դրժուար, անանցանելի լեռներով և ձորերով գնալ, սովորական ճանապարհը մի կողմ թողած. որ ու գիշեր առանց հանգիստ առնելու։ Եթէ նոյն իսկ ոչ մի վտանգի էլ չը հանդիպինք, միայն այդ տեսակ ճամբորդութիւնը բաւական է քեզ տանջելու համար։

—Քո ասածներն էլ ճիշդ են սիրելի Վահէս. բայց իմացիր որ այստեղ առանց քեզ -չարունակ քեզ վրա մտածելով ապրելն էլ դժուար է. նոյն իսկ անտանելի։

—Վնաս չունի Զարուհիս. այդ տեսակ դժուարութիւններին միշտ դիմանում են կանայք, բայց իրենց ուժից վեր դժուարութիւնները նրանց շուտով խորտակում են։

Սպասիր, այս անգամ ես գնամ. ճանբորդեմ. երկրի հետ ծանօթանամ. վերադարձիս. երբ համոզվեցի թէ իսկապէս դու էլ կարող ես, ան պատճառ կը տանեմ. հաւատացնում եմ քեզ։ Ի՞նչ կայ. Թո՛ղ մեր կիներն էլ սովորեն, իրենց ամուսինների ու եղբայրների հետ կուի գաշտը գնալ։ Եւ ես հաւատացած եմ որ կը սոգորին. եթէ իրանք արտով ցանկանում են օգտակար լինել։ Ես հաւատում եմ որ դու եթէ ուզենաս կարող ես անել։

Ուրեմն հանգիստ եղիր, այս անդամ սպասիր. վերադարձիս. ես ճամբորդութեան ամէն դժուարութիւնները կը պարզեմ քեզ ամենայն ճշդութեամբ, առանց չափազանցելու. և երբ դու նկատես թէ՝ կարող ես, դլխիս վրա. որ երիտասարդը չի՞ցանկայ քեզ պէս նշանածի, կամ սիրելիի հետ, ձեռք ձեռքի տուած հայրենասիրական վտանգաւոր գործերի մէջ մտնել։

—Շատ լաւ, Վահէ ես հաւատում եմ որ այդ խօսքերը միայն հիմա ինձ հանգստացնելու համար չեն. համոզվում եմ նաեւ որ քո ասածները ճշմարիտ են. գնա՝, այս անգամ մենակ. բայց միւս անգամ անպատճառ քեզ հետ եմ. ինչքան էլ որ դու վերադարձիդ սեւ գոյներով նկարագրես այդ տեսակ ճամբորդութիւնը։ Բայց ե՞րբ ես գնալու Վահէ։

—Վաղը չէ միւս գիշեր, Զարուհիս, դէ՛հ գնա հիմա, գլխարկդ դիր այս երեկոյ Տիգրանի մօտ ընթրիքի ենք հրաւիրված։ Ես նրա հետ խօսել եմ. իմ գնալուց յետոյ դու կարող ես նրանց տանը մնալ. նրա կինը լաւ կին է երեւում. մեր ընկերները շատ են գովում։

(Շարունակելի)

---

# ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻՆ

Մ Ա Ի Ի

ԴԼՈՒԽ Ա.

Արդէն երկու շաբաթ էր որ Վահէն և Զարուհին Դաւրէժում էին գտնըվում։ Այդ երկու շաբաթվայ մէջ երկուսն էլ կարողացել էին բաւականաչափ գաղափար կազմել թէ տեղական ժողովրդի և թէ այն երիտասարդների մասին, որոնք իրենց ընկերները պէտք է լինէին։ Դաւրէժի հայութեան կեանքը այնքան էլ լաւ տպաւորութիւն չէր թողել Զարուհու վրա, որովհետեւ այդ կեանքն էլ նոյնքան, թերեւս աւելի, փակ, նախապաշարումներով լի, ու խաւարապատ էր, որչափ իրենց հայրենիքում։ Քաղաքը իր նեղ փողոցներով, իր փակուած տներով, փողոցները իրենց աղտոտութիւններով, Պարսիկները իրենց դէպի Հայերը արտայայտած արհամարանքով շատ կոտրել էին Զարուհու սիրտը։ Նրա սիրտը կծկվում էր, երբ մտածում էր թէ Վահէի Տաճկաստան անցնելուց յետոյ մեն մենակ պէտք է մնայ այդ քաղաքի մէջ։ Նա տանը մենակ նստել չէր կարողանում. իսկ երբ դուրս էր գա-

բարքերին մէջտեղ հանելն է, որովհետեւ մինչեւ հիմա պահուած լուութիւնը վնասակար եղած է մէջտեղ։

Վերջապէս Մամիկոնեան քահանան ցարդ ինքզինքը տէր աշխարհի կարծելով՝ չափէն ու սահմանէն դուրս ելած է, ինչպէս որ իր կուրծքը կախած անվաւեր խաչը մարդուն խրնդուքը կը բազմապատկէ չափէն անդին։ Մենք այս տողերով զգաստութեան կը հրաւիրենք զինքը սպասելով որ իր նպերելի ընթացքին առջեւ վերջակէտ մը դնէ

Երկրորդ քահանան է Տ. Գէորգ Հալաճեան Սուչօվացի. այս մարդը իր վիճակը ճանչցող մէկն է, ժողովուրդն ալ զինքը կը յարգէ. տեղական լեզուն լաւ գիտէ եւ բաւական պատուաճանաչ ալ է։ Միայն կը յանձնարարենք որ թոյլ չը գտնուի եւ իր դիտողութիւններն ընէ երբեմն պաշտօնակցին եւ խրատէ զայն աւելի համեստ ըլլալու։

Ճամբորդ մը

Վառնա

# ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հրատարակուեցաւ «Բանաւէր»ը, նախկին հնագիտական, այժմ դիտական, գրական և գեղարուեստական տիտղոսներով, հանդէսը. թէ արտաքուստ և թէ ներքուստ կերպարանափոխուած։

Տեսանք Պ. Բասմաճեան պիտի յաջողի իր այս նոր «Բանաւէր»ը աւելի յաջող պայմաններու մէջ դնել։

Լօնտօնի մէջ սկսուեր է հրատարակուիլ «Պատանի» անունով պզտիկ ամսագիր մը, պատանիներու խմբագրութեամբ։ Պատանի խմբագիրները խնդրած են «Շարժումի» խմբագրութենէն այդ ամսագիրը յանձնարարել ազգային վարժարաններու աշակերտաց։ Անշուշտ, այդ պատանիներու քովը մեծ մը կը գտնուի. սիթէ՞ այդ մեծը չը կրցաւ հասկնալ որ պատանիները պատանիներուն մտաւոր և բարոյական զօրաւոր սնունդ մատակարարելու ուժը և կարողութիւնը չեն կրնար ունենալ։ Մենք «Պատանի»ն թերթելով, անոր մէջ պատանիներու համար օգտակար բան մը գտնել չը կրցանք և չենք կրնար յանձնարարել ոչ ոքի. ընդհակառակը խորհուրդ կուտանք այդ պարոններուն, նախ աշխատին Լօնտօնի մէջ իրենց միտքը զարգացնել, հապա յանդգնիլ իրենց հասակակիցներուն մատաւոր պաշար հայթայթել։

Ամերիկայի պատուելիներն ալ շարունակ թերթ հանելու ետեւէ են. «Կոչնակ»էն վերջը «Լոյս»ը երեւան եկաւ. «Լոյս»ը գիտական ամսագրի հովերը կառնէ. պզտիկ ամսագիր մըն է, և գիտութեան հին ճշմարտութիւններու մասին կը խօսի. կարծես թէ 100 տարի առաջ մեռած և նոր աշխարհ եկած ամսագիր մըն է, որուն խմբագրութիւնը տեղեկութիւն չունենալով գիտութեան յառաջդիմութեան ու տարածման մասին, հին դարձանը քամիին կուտայ։

Բարիզի մէջ նոր ամսաթերթի մը աշխարհ գալուն լուրն ալ հասաւ մեզի բարիզեան նորածնունդ ճեռագիր կիսաթերթի մը միջոցաւ։ Այս ամսաթերթը արդէն խոշոր ըէքլամ մը ունի դեռ երեւան չելած, զայն սիրի խմբագրեն Պոլսոյ գրական աշխարհին քսան տարիէ ի վեր ծանօթ գրագէտներ։ Ալ միւս ամսաթերթերու գործը լմնցաւ. հաշակաւոր գրագէտներու հետ մրցիլը շատ դժուարին պիտի ըլլայ։

Մէկ խօսքով՝ արտասանման Հայութիւնը թերթ հրատարակելու ցաւով վարակուած է. զրագէտ, յեղափոխական, տէրտէր, պատուելի, հնագէտ, մասնագէտներ, պատանիներ, շարունակ թերթէ որ կը հանեն. անգոյն, անհամ, առանց ոեւէ ուղղութեան, թերեւս և առանց նպատակի. օրիորդներն ալ որոշած էին հանել, բայց դեռ չերեւցաւ. թէեւ ատոր երեւումը իսկապէս ցանկալի է։ Մնացեր են օրօրոցի տղաքները. և եթէ այսպէս երթայ, յուսանք որ շուտով ատ պզտիկներն ալ թերթ մը հանեն, անունը «ծիւ ծիւ»։

Հայերը առաջ մեծով պզտիկով եկեղեցի շինելու վրայ էին և կուզէին տիրացու ըլլալ. թշնամին Հայաստանը կը քանդէր, անոնք ժամ կը շինէին, շարական կերգէին. հիմա ալ նոյն պարագաներու մէջ թերթ հանելու վրայ ենք։

***

# ԴԺԳՈՀԸ

—o—

(ՄԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ)

—Ի՞նչու կապրիմ աշխարքին մէջ. հարստութիւն տեսայ, սէր վայելեցի աշխարհ պտըտեցայ. մէկ խօսքով ամեն բան ինչ որ մարդուս համար բաղձալի ու տենչալի է ճաշակեցի։ Բայց նորէն գժգոհ եմ. նորէն աշխարհի մէջ բան մը կը փնտռեմ. ի՞նչ կը փնտռեմ ես ալ չեմ գիտեր. միայն կը փնտռեմ։

Անցեալ օր մտերիմ բարեկամներէս միոյն հետ զրուցած ատենիս, անոր յայտնեցի հոգւոյս ու սրտիս այս տարտամ, անորոշ վիճակը. ան ինծի ըսաւ. կամ անձնասպան եղիր, կամ գաղափարական գործի մը ծառայէ. անանկ գործի մը որ մեծ զոհողութիւններ կը պահանջէ, որուն մէջ կեանքդ նոյնիսկ վտանգուի։

—Աղէկ բան. կեանքս վտանգելու չափ գործի մը նուիրուիմ։ Բայց ինչպէ՞ս նուիրուիմ. երբ մինչեւ օրս ես ոչ մէկ զոհողութեան վարժուած չեմ։ Մեծ զոհողութիւն մը ընելու համար մարդ պզտիկ հասկէն զոհողութիւններու վարժուած պիտի ըլլայ. իսկ ես, ինչպէս ըսի, ամենեւին զոհողութիւն ըրած չեմ։ Եւ մեր հասարակութեան, իմ դասակարգիս պատկանող ոչ մէկ հասակակիցս ինձմէ տարբեր կերպով մեծցած ու սնուած է։ Բայց կը տեսնամ որ մեր ազատագրական գործին մէջ իմ հասակակից ընկերներէս ալ խառնուողներ կան։ Գործիչներ են. կը գործեն կոր. յեղափոխական մարմիններու մէջ անդամներ են։ Հաւատա՞մ որ ադ մարդիկ անկեղծ են. հաւատա՞մ որ ադ մարդիկ ինձմէ աւելի կորովի, աւելի հայրենասէր սրտեր ունի՞ն։ Չէ. չեմ հաւատար. ադ մարդիկները ինձմէ միայն մէկ առաւելութիւն մը, մէկ տարբերութիւն մը ունին։ Կեղծել գիտեն, կերպարանափոխուիլ գիտեն. դուրսի մարդոց ուրիշ կերպներկայանալ գիտեն. իրենց ներսիդին նոյնն է, ինչ որ խինս. իրենց տան մէջ նոյն դժգոհ, նոյն ամեն բան ճաշակած ու յղփացած մարդիկն են, ինչ որ ես եմ։ Անոնց երակներու մէջ ալ նոյն անգոյն, դրեթէ պաղած արիւնը կը հոսի, ինչ որ կը հոսի իմ երակներուս մէջ. բայց ես կը նախանձիմ ատոնց, որոնք թէեւ իմ պատճէններս են. բայց ուրիշ մը կրնան ըլլալ. կը նախանձիմ, որովհետեւ անոնք կապրին։ Կը յաւիմ որ ուժ մը չունիմ, գերբնական զօրութիւն մը չունիմ ադ մարդիկները, որոնք իմ պատճէններս են, բայց բնութեան աւելի գնահատելի արտադրութիւն մը ըլլալը կրնան ներկայանալ, ջախջախելու, աշխարհին, խաբուող աշխարհին հասկցնելու, թէ անոնք ալ ինձի պէս անպատակ, անպէտք անարժէք մարդիկ են, բնութեան չնչին արտադրութիւններ են։

Մ.

# ՊԱՏՈՒԱՆՇԱՆԸ ԵՒ ԶՈՒԻՑԵՐԻԱՆ

—][—

Զուիցերիոյ ազգային խորհրդարանին նախագահ Կիւստաւ Ատոր, որ Բարիզի վերջին ցուցահանդէսին մասնակցած էր իբր ներկայացուցիչ զուիցերիական Դաշնակցութեան, Ֆրանսական կառավարութեան կողմէ պատուուեցաւ պատուոյ լեգէոնի շքանշանով։

Զուիցերիական օրէնքը Դաշնակցութեան պաշտօնեաներուն կարգիլէ ոեւէ շքանշան ստանալ. սակայն Կիւստաւ Ատոր կարծելով որ այդ օրէնքը մշտական պաշտօնեաներու համար է, ընդունեց շքանշանը։

Բայց Զուիցերիոյ բարձրագոյն խորհրդարանը մատնացոյց ըրաւ Ատորի արգիլող օրէնքը։ Կիւստաւ Ատոր ստիպուեցաւ դիմել Ֆրանսական արտաքին գործոց նախարարին, բացատրելով իր կացութիւնը։ Ֆրանսական նախարարը պատասխանեց, որ իրենց երկրին օրէնքով, պատուոյ լեգէոնի շքանշանը ետ կառնուի միայն անպատուուած մարդոցմէ։

Այդ պատասխանին վրայ՝ Կիւստաւ Ատոր ստիպուեցաւ թէ իր պաշտօնէն հրաժարիլ և թէ ազգային երեսփոխանութենէ։

Ամբողջ քաղաքակրթուած Եւրոպան շքանշանի համար կը մեռնի, հոգին կուտայ. նոյնիսկ Սուլթան Համիտի տուած շքանշանին վրան կը գոռան, իսկ պզտիկ Զուիցերիան շքանշանը օրէնքով արգիլած է։ Ո՞վ գիտէ թէ Սուլթան որչափ նշաններ պիտի տար Զուիցերիայի նախարարներուն, եթէ անոնք ընդունիլ կարենային։

Կիւստաւ Ատոր Ֆրանսայի շքանշանը ետ չէ դրկած միայն Ֆրանսան չը վիրաւորելու և իր երկրին շահերը. իր կարծիքով, պաշտպանած ըլլալուն համար։

# ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—o—

Շատ իրատացի և լուրջ առաջարկ մ'էր որ «Շարժումը» իր անցեալ թիւով հրապարակ կը նետէր։ Այո՛, ի՞նչու համար և մեր ժողովուրդական իշխանութիւնները գէթ տարին անգամ մը չը հրապարակեն իրենց հաշիւները, որով ժողովուրդն ալ հասկնայ իր հատատութեանց ելեւմտական ընթացքը։

Ըլլայ թաղականութիւն. ըլլայ հոգաբարձութիւն միայն գանձատել գիտեն, առարկելով թէ դրամ չրատար ժողովուրդը։ Ինչո՞վ է մնդատար ժողովուրդը, երբ նա չը գիտեր թէ ի՞նչ ծախսերու ենթակայ է եկեղեցին և դպրոցները։

Հասարակութիւնը իր պատշաճ դատաստանին և կարողութեան չափով միշտ տուեր է և միշտ ալ կուտայ. սակայն ժողովուրդը երբ կը հասկնայ թէ՝ մի քիչ զոհաբերութիւն հոս ընելով ամէն բան կարգին ընթանալու է, մենք կը կարծենք թէ ժողովուրդը այդ զոհաբերութենէ ետ չը կենար։

Մեր թաղականութիւնները աւատական և ամիրայական դրութիւնով կը վարուին ժողովուրդին հետ. անոնք սովոր չեն հաշիւ տալու իրեն.

Մէկը կը լուծուի, միւսը կընտրուի, գուցէ նորընտիրը լուծուած թաղականութեան հաշիւները իսկ կ'անգիտանայ։ Միայն անոնք գիտեն, ինչպէս ըսինք, գանձատիլ, այլ գործել, հասոյթի նոր աղբիւրներ որոնել, ո՛չ։ Ի՛նչ փոյթ, մինչեւ հիմա այսպէս եղեր է և այսպէս ալ կերթայ, ահա թաղականներուն բնաբանը։

Իսկ երբ թաղականութեան և դպրոցական վարչութեան մէջ կը տիրէ անհաշտ տրտունջ, մէկզմէկ տապալելու դիտումներ, այդ ժամանակ ամէն բան կը կնճռոտի, որովհետեւ այն տեղ թաղականութիւնը շուրջը եկեղեցիին դրամներէն հոգաբարձութեան տալ։ Իսկ ի՞նչ կրնէ ժողովուրդէն հատաքած դրամները, ո՛չ ոք գիտէ և չէ կարող գիտնալ, որովհետեւ հաշիւ չի տրուիր։

Մենք կուզենք որ այս դրութեան վերջ մը տրուէր և ժողովուրդը գէթ տարին անգամ մը կարենար քննել՝ իրեն տուած դրամներուն ուր ծախսուիլը, ապահովուէր անոնց լաւ գործածութեան մասին։

Նոյնիսկ ես պիտի առաջարկէի որ այս երկու իշխանութիւններ, ամէն 3 ամիսը խրկէին տեղական լրագիրներու, իրենց նիստերուն արձանագրութեան մի պատճէնը, որով ժողովուրդին և իր իշիա-

նութեանց միջեւ անընդհատ առնչութիւն մը կարելի պիտի ըլլար ստեղծել։ Նա պիտի գիտնար իւր հաստատութեանց առօրեայ գնացքը, և ոչ թէ այսպէս մութին տակ ծածկուած պիտի մնար։

Նա այսպէսով պիտի գիտնար թէ իւր իշխանութեան գլուխը գտնուող անձնաւորութիւնները ի՞նչ զոհողութեա՞նց և կամ թերութեանց ենթակայ են, անոր համեմատ ալ պիտի դրուատէր, պիտի աջակցէր և կամ թէ պիտի պարսաւէր և տապալէր, ընտրելու համար իւր շահերը պաշտպանել գիտցող մարմին մը։

Մենք այսօր ունինք դպրոցներ, սակայն առանց իրենց կոչման արժանի ըլլալու. նոյն իսկ այդ անճարակ հաստատութիւնները, կուգան ժամանակներ, որ յառաջ տանելու կարելիութիւնը կը դառնայ կասկածելի։

Արդի վիճակին մէջ եթէ մարդ հաւատայ իւր երկու իշխանութեանց գանգատներուն և նկատի առնէ անոնց դրամական տագնապը, այն եզրակացութեան կը յանգի թէ՝ դպրոցներու գոյութիւնը դեռ եւս շատ կանխահաս է հասարակութեան համար, նա չըմբռներ անոնց անհրաժեշտ պէտքը։

Սակայն այնպէս չէ, մենք հիմայ հովին թի կը քաշենք, զոհողութիւնը կարծուածէն աւելի մեծ է, իսկ պտուղը ոչինչ. հիմակուան վիճակին մէջ մեր դպրոցները աւելի ՀԱՍԱԿԱՐ են քան թէ օգտաւէտ. որովհետեւ անոնց մէջ կորսուելու կը դատապարտուի ապագայ հասարակութիւնը, ապագայ ժողովուրդը, ապագայ հայութիւնը, որ պէտք է յառաջդիմէ մարդկութեան հետ միասին, հակառակ պարագային մենք դատապարտուած ենք չըքանալու գոյութեան կռուին մէջ։

ԶԳՈՆ

Վառնա, 5 Փետրվար

## ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ֆրանսայի հռչակաւոր Բրէսանսէ փետրուար 10 (Եւրոպ)ին Ժընէվի մէջ Հայ Ուսանողական Միութեան հրաւէրով, և Ժընէվ Քանթոնի նահանգային խորհուրդին նախագահ Ժէօրժ Ֆավոնի նախագահութեամբ դասախօսութիւն մը ըրեր է հայկական խնդրի մասին։

Ուսանողութիւնը և ամէն հիւրերը շատ յուզուեր ու ոգեւորուեր են։

Ուսանողական Միութեան քոմիթէն քաղաքին մէջ, «Մայր Հայաստան»ի պատկերով զարդարուած հրաւիրագրեր ցրուեր է։

—Գոհիրէի Հայ. Ց. Դաշնակցութեան «Ֆրաքֆիթ» խումբը անմոռանալի Տիգրան Երկաթի վիմատիպ, բաւական մեծադիր պատկերը լոյս ընծայած է, որուն մէկ օրինակը խմբագրութեանս նուէր ղրկուած է։

Պատկերը գնել փափագողները կրնան կահիրէ դիմել հետեւեալ հասցէով. Եփրատ Սիւնի Իսոդ Բէդանդ Դարիէ (Էիլդ)։

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

### ԹՈՒՐՔԻԱ

Թուրք կառավարութիւն Անատոլուի երկաթուղիի ընկերութենէն առ հաշիւ 400,000 լիրա փոխ առած է. որուն 130 հազարը պիտի վճարէ Անգլիոյ՝ Հայոց ՀԱՐԳի ժամանակ կրած ՁԱՍՍՈՒՑ համար. 40 հազարը Ռուսին՝ 1877ի պատերազմին տաճիկ գերիներու ծախուց փոխարէն, 30 հազարն ալ Աւստրիոյ. իսկ մնացածը պիտի պահէ ի վճարումն պաշտօնէից ամսականներուն։

Հայոց ի՞նչ պիտի տայ այնչափ ՁԱՍՍՈՒՑ փոխարէն։

### ԱՆԳԼԻԱ

Արտաքին գործոց նախարարը լորտերու խորհրդարանին մէջ հետեւեալը յայտարարած է.

«Ճաբոնը զօրեղ նաւատորմիղ մը ունի և հոգ զօրաբանակ. վտանգի մը ժամանակ ամէն մէկ տէրութեան դէմ կարող է կանգնիլ անյաղթող կերպով։ Բայց եթէ Ճաբոն յարձակման ենթարկուի դաշնակցած քանի մի պետութիւններու կողմէ, մեծ վտանգի մը մէջ պիտի գտնայ ինքզինքը, և այս պատահական մեծ վտանգին համար է որ մենք կուզենք իրեն օգնութեան հասնիլ։

Եթէ, դժբաղդաբար, խաղաղութիւնը վտանգուի, մեր Դաշնակցութեան նպատակը պիտի ըլլայ թշնամութիւնը ետեմնապակել։

Նախարարը յայտարարեր է նաեւ որ կառավարութիւնը երբէք կարծած չէ որ Մանչուրիան Չինաստանի մասը կը կազմէ։ Դաշնագրութիւնը կը վերաբերի Արկրին ամբողջութիւնը պահպանելուն, ուրեմն Մանչուրիան ալ կայ ատոր մէջ։

—Երեսփոխանական ժողովին մէջ Լորտ Բաքնպոմն նոյն նիւթի մասին խօսելով՝ յայտարարած է կառավարութիւնը պատրաստ է նոյն տեսակ համաձայնութեան յանկիլ ամէն մէկ պետութեան հետ, Չինաստանի մէջ իրերու ներկայ վիճակը պահպանելու համար. նոյնպէս և Պարսկաստանի համար։

### ՌՈՒՍԻԱ

Ելեւմտից նախարարութեան գլխաւոր պաշտօնեայ գաղտնի խորհրդական Կոլուպէվ Պոլիս գընացեր է թիւրքին առեւտրական վիճակը ի մօտոյ ուսումնասիրելու համար։

—Սեւ ծովի եղերքի երկաթուղիի շինութեան նախնական պատրաստութիւնք առաջիկայ գարնան պիտի սկսին. որ 1903ին այ բուն շինութիւն ձեռնարկեն։

—Խրիմ թերակղզիին թաթարները մեծ բազմութեամբ կը գաղթեն տաճկաստան. պատճառը այն է, որ իրենց մէջ խօսք կայ թէ Ռուսը զիրենք բռնի քրիստոնեայ պիտի ընէ։ ռուս լրագիրներն ալ կըսեն որ ասկէ զատ կայ և մի ուրիշ պատճառ. այն է որ այլեւայլ բաներու վրայ գրուած ծանր տուրքերը է ցաւ կը յայտնեն, որ այսպիսի աշխատասէր մի ժողովուրդ կը գաղթէ։

### ԱՒՍՏՐԻԱ

Թրիէստի մէջ մօտիկ 7000 գործաւորներ գործադուլ ըրած են։ Գործադուլ ընող գործաւորները զօրքերու հետ ընդհարում ունեցեր են։ Սպաննուածներ և վիրաւորեալներ կան։

Գործադուլը կը շարունակուի. քաղաքին բնակչութիւնը սարսափի մէջ է։

### ՃԱԲՈՆ

Ճաբոնական մամուլը մեծ հրճուանքով ընդուներ է Անգլո-Ճաբոնական դաշնակցութեան լուրը, որով Ճաբոնը կը մտնայ մեծ ազգերու խորհրդին մէջ։

Եւ կը յայտարարեն որ Ծայրագոյն Արեւելքի պատերազմական ամենազօրեղ պետութեան՝ Ճաբոնի և աշխարհիս ծովային ամենազօրեղ պետութեան Մեծ Բրիտանիոյ միացումը անյաղթելի ուժ մը կը կազմէ։

### ՉԻՆԱՍՏԱՆ

Բէքինէն կը հեռագրեն որ Անգլիոյ և Ճաբոնի Դաշնակցութեան լուրը մեծ յուզում առաջ բերեր է։

Անգլիական և Ճաբոնական դեսպանները կը մտածեն որ այդ Դաշնակցութիւնը խաղաղութիւնը կապահովէ և ջուրը կը ձգէ Ռուսիոյ եռական տրամադրութիւնները։ Հակառակ դիւանագէտները դաշնագրութեան առաջին յօդուածը քննադատելով կը յայտարարեն որ Անգլո—Ճաբոնական հովանաւորութիւն մը կստեղծուի Չինաստանի համար որով և կսպառնացուի Չինաստանի անկախութեան։

Չին պաշտօնեաները, որոնց մէջ է նաեւ Չինկ Իշխանը Դաշնակցութեան վրայ շատ ուրախացած են։ Չինկ Իշխանը յայտարարած է որ ինքը այլ եւս պիտի մերժէ ռուս ներկայացուցիչներու հետ վիճաբանիլ Չին Ռուսական պանքայի համաձայնութեան մասին։

### ԹՐԱՆՍՎԱԼ

Պոէրները նոր յաղթութիւններ տարեր են։

Քրիւկէր դեռ համոզուած է որ Պոէրները պիտի չահին։

### ՊՈՒԼԿԱՐԻԱ

Ցանքովիստներու պետը—Տրական Ցանքով բաւական ծանր հիւանդ է։

Ընտրողական պատրաստներ ըրած մինչոցին մտելու պատճառաւ։

—Քանի մը օր առաջ Ռումանիոյ Ժուրժովա քաղաքին զինուորական հրամանատարը սպանեցած էր Ռուսճուքի պուլկար հրամանատարին ուր և լաւ ընդունելութիւն գտած էր։

Անցեալ օր ալ Ռուսճուքի պուլկար զօրաց հրամանատարը ժէնէրալ Տրանտարեւսքիյ փոխ այցելութեան գացեր է Ժուրժովա, ուր նոյնպէս փառաւոր կերպով ընդունուեր է Ռումէն իշխանութեանց կողմէ։

Կը լուսացուի որ Ռումանիոյ և Պուլկարիոյ մինչեւ սեղի ունեցած պաղութիւնը անցնի։


## ԹԱՏՐՈՆ „ՍԱՆԴՐԱԼ“

1902 փետր. 7 հինգշաբթի գիշեր ժամ 9

ԹԱՏԵՐԱՍԷՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԿՈՂՄԷ

ՍԱՍՈՒՆԻԱՊՈՏԱՄԲՈՒԹԻՆԸ

Ողբերգ. 5 արար 1 պատկեր

Ծիծաղաշարժ զաւեշտ մը



ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ. „ՇԱՐԺՈՒՄ“

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցէտոմս, նամակագլուխ, հարսանեկան հրաւիրագիր, մահագդ։

Գիները յոյժ դիւրամատչելի։

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին։

Отговорникъ :

Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность“ — Варна